11593 15.10.25

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«13» 10 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 237 - 25

Նախաձեռնող՝ ***«Աշտարակի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ***
ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հր. 7

Գործունեությունը՝ ***Աշտարակ համայնքի աղբահանության տեխնիկական միջոցների վերազինում***
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 237 - 25

«13» 10 2025թ.

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի աղբահանության տեխնիկական միջոցների վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, համայնքի 28 բնակավայրեր

Ներածական մաս. «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի /այսուհետ՝ Հիմնարկ/ կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի և 28 բնակավայրերի աղբահանության տեխնիկական միջոցների վերազինում:

Հիմնարկը Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում և բնակավայրերում իրականացնում է կոշտ կենցաղային աղբի հավաքում և տեղափոխում Սասունիկի աղբավայր: Այս գործունեությունն իրականացվել է տասնամյակներ ի վեր, սակայն գործունեության համար օգտագործվող տեխնիկական միջոցները հնացել են և համայնքապետարանը որոշում է կայացրել վերազինել տեխնիկական պարկը՝ գնելով նոր աղբատար մեքենաներ և աղբարկղեր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ վտանգավոր թափոնների հավաքումը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից սպասարկվող տարածքները գտնվում է Արագած լեռան ստորին լանջերին՝ Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Երևան քաղաքից 13 կմ հյուսիս-արևմուտք:

Աշտարակ համայնքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը կազմում է 25.2°C: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 41.2°C, իսկ նվազագույն ջերմաստիճանը հասնում է – 24.5°C-ի:

Աշտարակի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդականի հասակի լավաները, որոնք հիմնականում մերկանում են Քասախ գետի կիրճում, մնացած հատվածներում նրանք ծածկված են ոչ մեծ հզորության ժամանակակից առաջացումներով,

որոնք ներկայացված են ավազակավերով, կավավազներով, խճային գրունտներով և գետի հունային մասերում գլաքարաճալաքարային նստվածքներով:

Աղբահանության տարածքները գտնվում են Աշտարակ համայնքի և բնակավայրերի բնակեցված և կառուցապատված գոտում, աղբամանները և աղբարկղերը տեղադրված են բնակավայրերի ասֆալտապատ տարածքներում:

Համաձայն ՇՄԱԳ-ի՝ բնակավայրերում աղբը հավաքվում է աղբարկղերում և աղբամաններում և, ըստ կուտակման տեղափոխվում է աղբավայր: Աղբի հավաքման որոշակի ժամանակացույց չկա: Աղբի կանոնակարգված տեսակավորում չի կատարվում, բնակիչները հաճախ առանձնացնում և հանում են մետաղներ, որոշ պլաստիկ իրեր:

№	Բնակավայր	Աղբի մոտավոր օրական ծավալը, մ³
1	Աշտարակ	70 - 72
2	Ագարակ	1.5 – 2.0
3	Աղձք	0.6 – 0.8
4	Անտառուտ	0.5 – 0.6
5	Ավան	0.5 – 0.6
6	Արագածոտն	1.2 – 1.4
7	Արուճ	0.8 – 1.0
8	Արտաշավան	1.0 - 1.2
9	Բազմաղբյուր	0.7 – 0.8
10	Բյուրական	1.2 – 1.4
11	Լեռնարոտ	0.8 – 1.0
12	Կարբի	1.2 – 1.5
13	Կոշ	1.2 – 1.5
14	Ղազարավան	0.7 – 0.8
15	Նոր Ամանուս	0.8 – 0.9
16	Նոր Եդեսիա	1.2 – 1.4
17	Նոր Երզնկա	1.0 – 1.2
18	Ոսկեհատ	1.2 – 1.4
19	Ոսկեվազ	1.5 – 1.8
20	Սաղմոսավան	1.2 – 1.4
21	Սա	1.0 – 1.2
22	Տեղեր	0.6 – 0.8
23	Ուշի	1.0 – 1.2
24	Ուջան	1.5 – 1.8
25	Փարպի	1.2 – 1.5
26	Օհանավան	1.5 – 2.0
27	Օշական	1.8 – 2.0
28	Օրգով	1.0 – 1.2

Հավաքվող աղբը հանդիսանում է կոշտ կենցաղային աղբ: Այս տեսակի աղբը գործնականում բոլոր քաղաքային բնակավայրերում ունի նույնանման կազմը, որի հիմնական բաղկացուցիչ խմբերն են՝ սննդային մնացորդներ, թուղթ և ստվարաթուղթ, պլաստիկ նյութեր, ապակի, սև և գունավոր մետաղներ, գործվածքեղեն և այլն:

Համաձայն ՇՄԱԳ-ի՝ համայնքներից շինարարական աղբ, խոշոր եզրաչափերի թափոն չի հավաքում, կազմակերպության տարածքներից աղբ չի տեղափոխում:

Աղբի հավաքումն իրականացվում է Աշտարակ համայնքում և 28 բնակավայրերում տեղադրված տարբեր չափերի շուրջ 300 աղբամաններից և աղբարկղերից: Համայնքային հիմնարկն աղբի հավաքման համար տվյալ պահին օգտագործում է առկա 29 տեխնիկական

միջոցներ՝ աղբահավաք մեքենաներ, ինքնաթափ մեքենաներ: Ընկերության անձնակազմը բաղկացած է 95 հոգուց:

Տարեկան աշխատանքային օրերի և ժամերի թիվը՝ 310 օր/տարի, 8 ժամ/օր: Աղբի օրական հավաքվող և տեղափոխվող քանակները 105 խմ է: Աղբն աղբամաններից բարձվում է աղբատար մեքենաներ և անմիջապես տեղափոխվում է Սասունիկի աղբավայր:

Սասունիկի աղբավայրի կազմակերպման նախագծին շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ 2022 թվականին տրվել է թիվ 0201-22 դրական փորձաքննական եզրակացություն, այն շահագործվում է «Էկո կենտրոն» ՍՊԸ-ի կողմից:

Սասունիկի աղբավայրը գտնվում է Աշտարակից 9 կմ, Սասունիկ համայնքից 4 կմ և Երևանից 10 կմ հեռավորության վրա: Աղբավայրը նախատեսված է կոշտ կենցաղային թափոնների պահեստավորման, մեկուսացման և հեռացման /թաղման/ համար՝ ապահովելով հողի, մթնոլորտի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումից պաշտպանությունը, կանխելով պաթոգենների, կրծողների և միջատների տարածումը: Աղբավայրում ընդունվում է բնակչության կողմից սպառման գործընթացում բնակելի տարածքներում առաջացած, սանիտարական մաքրման արդյունքում, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների:

Աղբավայրի թափոնների պահեստավորման տարածքը կազմում է 8 հա, որից շահագործվում է 4 հա-ը (10%-ը տնտեսական գոտի, իսկ 10 %-ը հողի պահեստավորման գոտի): Գրունտային ջրերը գտնվում են 25 մետր խորության վրա, թափոնների թաղման տարածքը կավային է և ունի 2.0-3.5 մետր հզորություն, տեղադրման տարածքի փոսի խորությունը 6-10 մետր:

Աղբահավաքումը կատարվում է 29 աղբահավաք մեքենաների միջոցով: Որպես վառելիք այս տրանսպորտային միջոցներն օգտագործում են գազ և դիզելային վառելիք: Աղբավայրը համալրված է աղբի ընդունման, տեղադրման և ծածկման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ բուլդոզեր, տրակտոր, բեռնատար ավտոմեքեներ և այլն:

Աղբավայրը նախատեսված է 25 տարի ժամանակով, օրական 10-30 տոննա կենցաղային և սանիտարական մաքրման արդյունքում առաջացած թափոնների ընդունման և պահեստավորման /թաղման/ համար: Աղբավայրում կատարվում են թափոնների տեղադրում և տոփում երկու հարկաբաժիններով, յուրաքանչյուր հարկաբաժինը 2.5 մ բարձրությամբ: Յուրաքանչյուր 1 մետր հաստությամբ տոփանված թափոնները մեկուսացվում են 0.25-0.30 սմ հաստությամբ հողաշերտով: Աղբավայրն ունի մուտքի և ելքի հսկիչ կետ, մեքենաների անիվների ախտահանման կետ, որտեղ մեքենաների ելքի դեպքում կատարվում է անիվների պարտադիր ախտահանում:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության աղբի հավաքման ժամանակ տեղում իրականացվում է նաև աղբամանների շրջակայքում թափված աղբի հավաքում, անհրաժեշտության դեպքում կատարվում է աղբամանների ախտահանում հատուկ փրփռային նյութերով՝ որպեսզի չառաջանա արտահոսք:

Վերազինման շրջանակներում նախատեսվում է փոխարինել բոլոր հնացած և աղբահավաքման համար հատուկ հանգույցով չհամալրված մեքենաները, ինչպես նաև փոխարինել վնասված աղբարկղերը:

Նախատեսվում է գնել 16 ՄԱՅ մակնիշի աղբատար մեքենաներ: Հիմնարկի հաշվեկշռում առկա 300 աղբամաններից մոտավորապես 40-50 հատը կորցրել են իրենց պիտանելիությունը: Նախատեսվում է ձեռք բերել 70 նոր աղբարկղ, ինչը թույլ կտա փոխարինել վնասվածները, ինչպես նաև ընդլայնել աղբահավաքման տարածքները:

Աղբահանության ընթացքում ազդեցությունը կապված է աղբամանների և աղբարկղերի սպասարկման, աղբի բարձման և տեղափոխման ժամանակ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման աշխատանքների հետ:

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման արդյունքում առաջացող արտանետումներով:

Թափոնների դասակարգումը կատարվում է՝ համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25 դեկտեմբերի 2006 թվականի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրամանի: Հրամանի հավելվածում բերված ցանկն իր բոլոր լրացումներով պարունակում է մոտավորապես 1000 անվանում /թափոնատեսակ/, որոնցից առնվազն կեսը կարող են հանդիպել կոշտ կենցաղային թափոններում:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Աշտարակ համայնքում և բնակավայրերում աղբի հավաքման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ: Միջոցառումների նկարագրությունը, կատարողները և նախատեսված ծախսերը ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում: Միջոցառումների կատարումը և արդյունավետությունը վերահսկելու կարգը, դրանց կատարման պատասխանատուները և իրականացման ժամկետները ներառված են մոնիթորինգի պլանում, որոնք են՝

- թափոնները բեռնել առանց շրջակայքի աղբոտման,
- օգտագործել աղբահավաքման համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ,
- պարբերաբար իրականացնել աղբատար մեքենաների ստուգում, շարժիչների կարգաբերում և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգում,
- ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ փրփռային միջոցներով, որոնցից չի առաջանում ջրային արտահոսք,
- աղբամանների և աղբարկղերի ախտահանումը կատարել հատուկ ախտահանիչ փրփուռների միջոցով,
- սպասարկող անձնակազմին ապահովել անհատական պաշտպանման միջոցներով, իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով,
- փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար,
- մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտագությունն ապահովելու նպատակով և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 260 ՀՀ հազ. դրամ/տարի:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի աղբահանության տեխնիկական միջոցների վերազինումը և շահագործումը կատարվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են աղբահանության ժամանակ, կրելու են տեղային բնույթ:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Հաշվետվությամբ ներկայացված գործունեությունը ներառում է միայն գոյացող աղբի հավաքում աղբամաններում և փոխադրում՝ առանց դրանց տեսակավորման ու փոխադրման, աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման գործընթացների:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն Արագածոտնի մարզպետարանը, Աշտարակի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են համայնքում և բնակավայրերում աղբահանության և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավվում:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական նորմերի պահպանմանը:
- Հնարավորության դեպքում դիտարկել աղբի տեսակավորման աղբամանների և աղբարկղերի տեղադրում՝ Սասունիկի աղբավայրի ծանրաբեռնվածությունը մեղմելու նպատակով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի աղբահանության տեխնիկական միջոցների վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան